ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«02» Դեկտեմբեր 2018 թ. № 75-Հ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՄԻ ՇԱՐՔ ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2017 թվականի մայիսի 24-ի «Գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող գնումների բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 237-Ա, «Գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող անշարժ գույքի և գնումների բազային միավորի հնգապատիկը չգերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 238-Ա, «Բաց մրցույթով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող անշարժ գույքի և գնումների բազային միավորի հնգապատիկը չգերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 243-Ա, «Բաց մրցույթով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող գնումների բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 244-Ա, «Բաց մրցույթով թղթային եղանակով կազմակերպվող գնումների բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 245-Ա, «Բաց մրցույթով թղթային եղանակով կազմակերպվող անշարժ գույքի և գնումների բազային միավորի հնգապատիկը չգերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 246-Ա, 2017 թվականի մայիսի 25-ի «Գնանշման հարցման ձևով թղթային եղանակով կազմակերպվող գնումների բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 247-Ա, «Մեկ անձից գնման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող՝ անշարժ գույքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով կատարվող և գնումների բազային միավորի հնգապատիկը չգերազանցող գնման հայտարարությունների և

հրավերների օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 248-Ա, «Մեկ անձից գնման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող՝ գնումների բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 249-Ա, «Գնանշման հարցման ձևով թղթային եղանակով կազմակերպվող անշարժ գույքի և գնումների բազային միավորի հնգապատիկը չգերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 250-Ա, 2017 թվականի մայիսի 30-ի «Մեկ անձից գնման ձևով թղթային եղանակով կազմակերպվող՝ անշարժ գույքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով կատարվող և գնումների բազային միավորի հնգապատիկը չգերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 261-Ա, «Մեկ անձից գնման ձևով թղթային եղանակով կազմակերպվող՝ գնումների բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 262-Ա, «Փակ նպատակային մրցույթով թղթային եղանակով կազմակերպվող գնումների բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման նախաորակավորման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 263-Ա և «Փակ նպատակային մրցույթով թղթային եղանակով կազմակերպվող անշարժ գույքի և գնումների բազային միավորի հնգապատիկը չգերազանցող գնման նախաորակավորման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 264-Ա հրամաններում (այսուհետ՝ Հրամաններ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանների 1-ին կետերի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով հաստատված հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն հրամանի 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41 և 42 հավելվածների:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2018 թվականի մարտի 3-ից:

Վ. ԱՐԱՄՅԱՆ